ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 55(1), 2021 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 911.37

ԼԵՌՆԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ *

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Լեռնային երկրների բնաաշխարհագրական պայմանների բազմազանությունը և սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկություններն իրենց ազդեցությունն են թողնում այդպիսի շրջանների գյուղական տարածքների և տարաբակեցման զարգացման վրա՝ պայմանավորելով գյուղական տարածքների և տարաբնակեցման ինքնատիպ գծերը: Հոդվածում կատարվել է լեռնային երկրների գյուղական տարածքների ու տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտման տեսական հարցերի վերլուծություն և ընդհանրացում:

https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.1.049

***Keywords*:** mountainous country, rural settlement, complex geographical research, theoretical frameworks.

Խնդրի դրվածքը: Աշխարհագրական գիտության զարգացմանը զուգընթաց աստիճանաբար ձևավորվել են նաև առանձին երկրների գյուղական կյանքի ու կենցաղի, բնակավայրերի, ինչպես նաև տարաբնակեցման բնորոշ գծերի մասին ուսումնասիրությունները: Արևմուտքի շատ երկրներում արդեն XIX դարի երկրորդ կեսին գյուղական բնակավայրերի ուսումնասիրությունը դարձել էր անտրոպոաշխարհագրության (հատկապես Գերմանիայում) և «մարդու աշխարհագրության» կարևոր բաղադրիչներից [1]: Ռուսաստանում 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբների երկրագրական աշխատանքներում տնտեսության տարբեր ճյուղերի (առավելապես գյուղատնտեսության) վերաբերյալ տնտեսա-վիճակագրական տեղեկություններում կան նաև նյութեր գյուղական տարածքների տարբեր ոլորտների վերաբերյալ [1]:

Խորհրդային աշխարհագրական գիտության մեջ գյուղական տարածքների վերաբերյալ աշխարհագրական ուսումնասիրություններն ի հայտ են եկել 1940-ական թ.-ից հետո, պայմանավորված՝ խորհրդային առաջին տասնամյակներում երկրում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններով, որոնք առաջացրին նշանակալից սոցիալական վերափոխումներ և փոփոխություններ գյուղում: Բացի այդ, ԽՍՀՄ-ում աշխարհագրական գիտության

* E-mail: a.potosyan@ysu.am

ֆիզիկականի և տնտեսականի արագ դիֆերենցացման պայմաններում գյուղական տարածքների համալիր ուսումնասիրությունը սկզբնական շրջանում չուներ պատշաճ տեղ [2]:

ԽՍՀՄ-ում գյուղական բնակավայրերի համալիր աշխարհագրական ուսումնասիրության առաջին ծրագիրը մշակել է Սաուշկինը [3]: Հիշատակության են արժանի նաև Ռ. Կաբոյի [4] և Լ. Ուստինովայի [5] ուսումնասիրությունները: Դրանցում առաջին անգամ տրված է առանձին լեռնային շրջանների բնակչության և բնակավայրերի աշխարհագրական ուսումնասիրությունը: Իսկ Ն. Լյալիկովի [6] կողմից տրվել է ԽՍՀՄ-ի տարածքում գյուղական տարաբնակեցման տարածքային տարբերությունները՝ կարևորելով գյուղական տարաբնակեցման գոտիական և զոնայական տարբերությունները, դրա հետ կապված՝ գյուղատնտեսական արտադրության տիպերը և մասնագիտացման առանձնահատկությունները:

Խորհրդային վերջին տասնամյակներին գյուղական տարածքների ու տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտության տեսական և մեթոդական հարցերը խորացվել և հետագա զարգացում են ստացել Ս. Կովալյովի [7], Վ. Ջառշվիլու [8], Վ. Մաքսիմովի [9], Ս. Ալեքսեևի [10] և այլ հեղինակների կողմից:

Հետխորհրդային տարիներին գյուղական տարաբնակեցմանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններից ուշադրության են արժանի Ն. Զուբարևիչի և Տ. Նեֆեդովայի աշխատանքները: Դրանցում քննարկվել են գյուղական տարաբնակեցման և գյուղական տարածքներում ծառայությունների ցանցի տրանսֆորմացիայի [11] և Ռուսաստանում գյուղական տարաբնակեցման տարածաշրջանային առանձնահատկությունները, փոփոխությունների գործոնները և միտումները [12]:

Խորհրդային և հետխորհրդային տարիներին գյուղական տարածքներին և տարաբնակացմանը նվիրված աշխատանքներում կարևոր տեղ են զբաղեցնում լեռնային շրջանների գյուղական տարաբնակեցման ձևավորման ու զարգացման աշխարհագրական առանձնահատկություններին, բարձրության տարբեր գոտիներում գյուղական բնակչության ու բնակավայրերի խտության փոփոխություններին, լեռնային շրջանների բնազրկման, ռեսուրսների օգտագործման և կայուն զարգացման հիմնահարցերին նվիրված ուսումնասիրությունները [13]:

Անժխտելի է այն փաստը, որ գյուղական տարածքներում, մասնավորապես՝ գյուղական տարաբնակեցման մեջ տեղի ունեցող գործընթացներն առանձնահատուկ գծերով են դրսևորվում լեռնային երկրներում և տարածաշրջաններում, քանի որ վերջիններս առավել զգայուն են բնատնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, քաղաքական, տարածաշրջանային, էկոլոգիական և տեղային այլ գործընթացներում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ: Այդ ամենով հանդերձ, հարկ է փաստել, որ առ այսօր պատշաճ մակարդակով չի տրվել լեռնային տարածքների գյուղական տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտության տեսական հարցերի շրջանակի ամբողջական հիմնավորումը: Սույն հոդվածում փորձ է արվում լրացնել այդ բացը:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Մարդն ապրել է լեռնային տարածքներում իր առաջացման ժամանակներից: Այդպիսի տարածքներում բնակավայրերի առաջացումն ու զարգացումը ընթացել է

պատմական կոնկրետ ժամանակաշրջանում՝ բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական որոշակի գործոնների ազդեցության տակ: Ինչպես առանձին բնակավայրերի, այնպես էլ ձևավորված տարաբնակեցման համակարգի պատմականորեն ժառանգած տարբեր տարրերը մեծ ազդեցություն են թողնում բնակավայրերի ներկայիս ցանցի ձևավորման և հետագա զարգացման վրա: Այս իմաստով լեռնային երկրների գյուղական տարածքների և տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտման կարևոր խնդիրներից մեկը *տարածքի բնակեցման և բնակավայրերի ու տարաբնակեցման ցանցի (համակարգի) ձևավորման պատմական նախադրյալների վերլուծությունն ու գնահատումն է*:

Հայտնի է, որ բնակչության արտադրական գործունեությունը տեղի է ունենում բնաաշխարհագրական ոչ միանման պայմաններ ունեցող տարածքներում: Բնաաշխարհագրական պայմաններն ավելի կամ պակաս չափով ազդում են բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման վրա՝ պայմանավորելով դրանց այս կամ այն առանձնահատկությունները: Գյուղական տարածքների ու տարաբնակեցման վրա բնական պայմանների ազդեցությունն ավելի ցայտուն գծերով է դրսևորվում լեռնային երկրներում, որոնք աչքի են ընկնում բնական պայմանների խիստ բազմազանությամբ: Այդպիսի շրջաններում ռելիեֆի հարաբերական և բացարձակ բարձրությունների մեծ տատանումները, բազմաբնույթ դիրքադրությունները և դրանցով պայմանավորված հողաբուսական ծածկի բազմազանությունը, հորիզոնական և ուղղաձիգ խիստ մասնատվածությունը պայմանավորում են ոչ միայն բնատարածքային համալիրների ինքնատիպությունը, այլ նաև՝ գյուղական տարածքների և տարաբնակեցման: Հետևաբար, լեռնային երկրների գյուղական տարածքների ու տարաբնակեցման աշխարհագրական հետազոտություններում կարևոր տեղ պետք է ունենա *բնակավայրերի ձևաբանական առանձնահատկությունների և տարածքի բնակեցվածության՝ բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխվածության ուսումնասիրությունը*: Այդպիսի ուսումնասիրության միջոցով միաժամանակ բացահայտվում են նաև նշված լեռնային շրջանների բնական համալիրի տարրերի և տնտեսական գործունեության միջև եղած կապը: Ընդ որում, տարածքի բնակեցվածության քիչ թե շատ իրական պատկերը կարտահայտվի այն դեպքում, եթե բնակչության և բնակավայրերի տեղաբաշխումը և խտությունը բացահայտվի ոչ միայն ամբողջ տարածքի, այլ նաև գյուղատնտեսական հողատարածքների և վարելահողերի հաշվով: Այս համատեքստում առանձնակի կարևորություն ունեն նաև «լեռնային տարածքներում բնակչության տեղաբաշխման համաչափության և տարաբնակեցման տարբեր մակարդակի համակարգերում կենտրոնականի հանդեպ բնակավայրերի ցրվածության որոշումը: Երկու դեպքում էլ կիրառելով համապատասխան մաթեմատիկական ապարատ» [14]:

Լեռնային երկրների գյուղական տարածքների ու տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտման կարևոր հարցերից է *գյուղերի մարդաքանակի վերլուծությունը*: Վերջինս ինտեգրալ այն ցուցանիշն է, որն ընդհանրական ձևով արտահայտում է գյուղական տարաբնակեցման պատկերը և գյուղական բնակավայրերի զարգացման և վերափոխման արդյունքը: Լեռնային տարածքները հիմնականում աչքի են ընկնում գյուղական բնակավայրերի մարդաքանակի բավական մեծ տարբերություններով, որը պայմանավորված է ինչպես բնաաշխարհագրական, այնպես էլ սոցիալ-տնտեսական

տարբեր գործոնների ազդեցությամբ: Այս իմաստով *կարևոր խնդիր է համարվում գյուղերի մարդաքանակի և բնական ու սոցիալ-տնտեսական տարբեր գործոնների միջև կոռելյացիոն կախվածության բացահայտումը, վերլուծությունը և գնահատումը*: Դրանք հնարավորություն կտան բացահայտել ինչպես առանձին բնակավայրերի, այնպես էլ գյուղական տարածքների և տարաբնակեցման զարգացման միտումները, վերափոխման, զարգացման և կատարելագործման ուղիները [13]:

Լեռնային երկրներում գյուղական տարածքներն ու բնակավայրերը բնութագրող ցուցանիշները զգալի փոփոխություններ են կրում ինչպես բնաաշխարհագրական պայմանների, այնպես էլ հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ: Մյուս կողմից՝ գյուղական բնակավայրերում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացներն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում հասարակական կյանքի տարբեր կողմերի վրա: Ժողովրդագրական գործընթացների վերջնական արդյունքում ձևավորվում է տվյալ երկրի կամ բնակավայրի բնակչության սեռատարիքային կառուցվածքը, որն իր անմիջական ազդեցությունն է թողնում ինչպես առանձին բնակավայրերի զարգացման և առաջընթացի, այնպես էլ տարաբնակեցման վրա: Այսպես՝ լեռնային շրջանների տարածքային ռեսուրսների և գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման արդյունավետությունը պայմանավորված է նաև մարդկային ներուժի արդյունավետ օգտագործումից և կառավարումից: Ուստի, լեռնային տարածքների գյուղական տարաբնակեցման հետազոտություններում տարաբնակեցման շարժընթացի և ժողովրդագրական գործընթացների տարածաժամանակային վերլուծությունների հիման վրա կբացահայտվեն դրանցում առկա միտումները, վեր կհանվեն առկա հիմնախնդիրները: Դրանք հնարավորություն կտան տարաբնակեցման շարժընթացի գործընթացն արդյունավետ կառավարելու համար:

Լեռնային երկրներում ոչ մեծ տարածքի սահմաններում առկա է ագրոկլիմայական ռեսուրսների զգալի բազմազանություն, որի պատճառով առկա է գյուղատնտեսական արտադրության ճյուղային կառուցվածքի նկատելի տարբերություններ: Հաշվի առնելով այդ հանգամանքն անհրաժեշտ է իրականացնել գյուղական տարածքների և բնակավայրերի արտադրական մասնագիտացման և գործառույթային կառուցվածքի հետազոտություն, գործառույթային և ըստ արտադրական մասնագիտացման տիպերի առանձնացում: Ստացված արդյունքները հնարավորություն կտան բացահայտել հետազոտվող տարածքի գյուղական բնակավայրերի արտադրական մասնագիտացման և գործառութային կառուցվածքի տարածքային առանձնահատկությունները և զարգացման միտումները:

Գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման գործում, բացի զուտ տնտեսաարտադրական գործոններից իրենց դերն ունեն նաև սոցիալ-մշակութային նախադրյալները՝ գյուղական բնակչության զբաղվածության կառուցվածքը, կենսամակարդակը, ապրելակերպի առանձնահատկությունները, բնակավայրի ապահովվածությունը սոցիալ-մշակութային ծառայություններով և այլն: Գյուղական տարածքների ու բնակավայրերի հետազոտման այս կողմը հնարավորություն է տալիս ավելի ամբողջական դարձնել լեռնային շրջանների գյուղական տարածքների ու բնակավայրերի սոցիալ-տնտեսաաշխարհագրական նկարագիրը և դրանց կառավարումը:

Հարթավայրերի համեմատությամբ լեռնային տարածքներն աչքի են ընկնում գյուղական բնակավայրերի հատկանշական տարբեր կողմերի բազմազանությամբ: Բնաաշխարհագրական, սոցիալ-տնտեսական և պատմական գործոնների ազդեցության տակ ձևավորվում է ինչպես գյուղատնտեսական արտադրության, այնպես էլ գյուղական տարաբնակեցման տիպերի բազմազանություն: Այդ ամենը պահանջում է կատարել գյուղական բնակավայրերի դասակարգում ըստ մարդաշատության, գործառութային կառուցվածքի, ծագումնաբանական հատկանիշների, սոցիալ-ժողովրդագրական և ձևաբանական կառուցվածքի, աշխարհագրական դիրքի և այլ հատկանիշների [15]: Ժամանակակից պայմաններում կարևոր նշանակություն է ստանում գյուղական բնակավայրերի համալիր դասակարգումը և տիպայնացումը, երբ հաշվի են առնվում վերջիններիս առավել տիպական և կարևոր հատկանիշները: Տարաբնակեցման մի քանի հատկանիշների հիման վրա առանձնացված տիպն ամբողջական պատկերացում է տալիս տարաբնակեցման բնույթի մասին: Հետազոտության այդպիսի կողմը հնարավորություն է տալիս առանձնացնել բնակավայրերի տիպերի խմբեր, հասկանալ դրանց առանձնահատկությունները, զարգացման միտումները և հանդիսանում է հիմք բնակավայրերի հեռանկարային զարգացման խնդիրների լուծման համար:

Լեռնային երկրներն աչքի են ընկնում նաև գյուղական տարաբնակեցման տարածքային կառուցվածքի բազմազանությամբ՝ բնակավայրերի ցանցի առանձնահատկություններով. բնակավայրերի աշխարհագրական դիրքով, տրանսպորտային մատչելիությամբ և տրանսպորտաաշխարհագրական դիրքով: Այս իմաստով անհրաժեշտ է կատարել բնակավայրերի տրանսպորտաաշխարհագրական դիրքի վերլուծություն և խմբավորում՝ ըստ մոտակա սպասարկման կենտրոնից ունեցած տրանսպորտային մատչելիության գոտիների և կատարել բնակչության բաշխումն՝ ըստ գոտիների [14]: Տարաբնակեցման տարածքային կառուցվածքի բնութագրման համար անհրաժեշտ է վերլուծել նաև բնակչության տեղաբաշխման պատկերն ըստ մոտակա սպասարկման կենտրոնից ունեցած տրանսպորտային մատչելիության գոտիների: Կարևոր խնդիր է նաև լեռնային երկրների գյուղական բնակավայրերի խմբավորումն ըստ գլխավոր կամ ելք ապահովող ճանապարհից ունեցած հեռավորության գոտիների, կամ «փակուղային տրանսպորտաաշխարհագրական դիրք ունեցող» գյուղական բնակավայրերի առանձնացումը և խմբավորումը [14]:

Լեռնային երկրներում գյուղական տարածքների և տարաբնակեցման համակարգի զարգացման գործընթացներում, բացի բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական գործոններից առանձնակի կարևորություն ունի վարչատարածքային բաժանման համակարգը: Իր հերթին՝ տարաբնակեցման բնույթը նշանակալից ազդեցություն է թողնում վարչատարածքային բաժանման վրա: Իրերի այդպիսի վիճակը ենթադրում է լեռնային տարածքների գյուղական տարաբնակեցման և վարչատարածքային բաժանման միջև փոխազդեցությունների վերլուծություն և առկա կապերի բացահայտում: Դա հնարավորություն կտա մի կողմից կատարելագործել առկա վարչատարածքային բաժանման համակարգը՝ նպաստելով տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործմանը, մյուս կողմից՝ կնպաստի բնակավայրերի

սոցիալ-տնտեսական առաջընթացին՝ վերջիններս ավելի մեծ հնարավորություն կունենան տարատեսակ ծառայություններից օգտվելու համար:

Լեռնային երկրներում գյուղական տարածքներն ու տարաբնակեցումն աչքի են ընկնում ոչ միայն առանձին բնակավայրերի, դրանց խմբերի ու տարաբնակեցման բնույթի առանձնահատկություններով, այլ նաև տարածքային կամ տարածաշրջանային զգալիորեն մեծ տարբերություններով: Բացի այդ, այդպիսի տարածքներում գյուղական տարածքների ու տարաբնակեցման առանձին տիպերի առանձնացումով չի սահմանափակվում գյուղական տարածքների ու տարաբնակեցման տարածքային կազմակերպման բնութագրումը: Տիպ առաջացնող հատկանիշներից բացի, կան նաև գյուղական տարածքների ու տարաբնակեցման ոչ քիչ տարրեր, որոնց հետազոտությունը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել բնակչության ու բնակավայրերի տարածքային կազմակերպման առանձնահատկություններին: Մակերևույթի բարդ կառուցվածքի և բնաաշխարհագրական պայմանների բազմազանության հետևանքով լեռնային երկրների առանձին հատվածներն ու տարածաշրջաններն աչքի են ընկնում պատմազգագրական, բնական համալիրի և տնտեսության զարգացման ու մասնագիտացման ինքնատիպ գծերով, որոնք պայմանավորում են նաև դրանցում գյուղական տարածքների ու տարաբնակեցման առանձնահատկությունները: Այսպիսի մոտեցմամբ ավելի ամբողջական կդառնա լեռնային շրջանների գյուղական տարածքների ու տարաբնակեցման համալիր հետազոտությունը:

Գյուղական տարածքների ու տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտության կարևորագույն խնդիրներից և մեթոդներից է համարվում շրջանացումը, որն ունի ոչ միայն տեսական, այլ նաև կիրառական կարևոր նշանակություն: Դրա միջոցով կատարվում է ամբողջի տրոհումը մասերի և ապահովում է դրանց ավելի խորն ու բազմակողմանի ուսումնասիրումը, որն անհնար է ամբողջը հետազոտելու ժամանակ: Միա-ժամանակ, այդպիսի մասերի ուսումնասիրությունը, համադրումն ու համեմատումը նպաստում են ամբողջը ճիշտ ճանաչելուն, ինչպես նաև ընդհանուր օրինաչափությունները բացահայտելուն: Մեթոդաբանական այդ հիմնադրույթն առավել քան կարևոր դեր ունի բնաաշխարհագրական պայմանների, տնտեսական գործունեության և տարածքի բնակեցման ու տարաբնակեցման խիստ բազմազանությամբ և առանձնահատկություններով աչքի ընկնող լեռնային երկրների ու տարածաշրջանների գյուղական տարածքների շրջանացման ժամանակ: Այդ առումով, որպես լեռնային երկրների գյուղական տարածքների ու տարաբնակեցման տարածքային կառուցվածքի բացահայտման ու հետազոտման, տարաբնակեցման շրջանային տարբերությունների ու առանձնահատկությունների ճանաչման միջոց, շրջանացումը կարելի է համարել անփոխարինելի: Բացի գիտական հետազոտության մեթոդից, այն հանդես է գալիս նաև տարաբնակեցման տարածքային կառուցվածքի կատարելագործման մեթոդ կամ միջոց: Այսինքն՝ լեռնային երկրների գյուղական տարածքների ու տարաբնակեցման շրջանացման արդյունքները և ստացված շրջանացման սխեման հնարավորություն են տալիս իրականացնել գյուղական տարածքների ու տարաբնակեցման հեռանկարային տարածքային պլանավորում:

Ժամանակակից պայմաններում գյուղական տարածքների աշխարհագրական հետազոտության մեթոդաբանական խնդիրներից մեկը նրա

ուսումնասիրման տարբեր ասպեկտների հարաբերակցությունն է [10]: Եթե խորհրդային տարիներին ավանդական էր տնտեսական ասպեկտը, ապա վերջին 3–4 տասնամյակներին զարգանում են նաև գյուղական տարածքների հետազոտման սոցիալ-աշխարհագրական և էկոլոգո-աշխարհագրական առանձնահատկությունները: Ակնհայտ է, որ հետազոտության այդ ասպեկտները սերտորեն փոխկապակցված են, քանի որ դրանց ամբողջությունն ընդհանրական ու համալիր պատկերացում կտա գյուղական տարածքների, դրանց վիճակի, հիմնախնդիրների և զարգացման մասին:

Եզրակացություն: Այսպիսով, լեռնային երկրների գյուղական տարածքների ու տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտությունը ընդգրկում է հարցերի հետևյալ շրջանակը.

1. գյուղական տարածքների ու տարաբնակեցման ձևավորման բնաաշխարհագրական, պատմական և սոցիալ-տնտեսական նախադրյալների, բնակավայրերի մարդաշատության, բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման հետազոտությունները;

2. բնակավայրերի ձևաբանական, գործառութային (արտադրական) և ժողովրդագրական տիպերի, գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացի, տարածքի բնակեցման և տարաբնակեցման տիպերի հետազոտությունները;

3. գյուղական տարածքների ու տարաբնակեցման տարածքային կառուցվածքի և տարածաշրջանային առանձհատկությունների, տարաբնակեցման և վարչատարածքային բաժանման միջև փոխազդեցությունների վերլուծությունն ու առկա կապերի բացահայտումը;

4. գյուղական տարաբնակեցման համալիր տիպաբանության և շրջանացման հարցերի քննարկումը, որոնք հանդիսանում են լեռնային երկրների գյուղական տարաբնակեցման աշխարհագրական հետազոտություններն ընդհանրացնող և զարգացման միտումները բացահայտող ուղղություններ;

5. գյուղական բնակչության և բնակավայրերի շարժընթացի ժամանակակից միտումների, զարգացման և վերափոխման վրա ազդող հիմնական գործոնների ուսումնասիրումը, գյուղական բնակավայրերի հեռանկարային զարգացման ուղիների բացահայտումը;

6. հետազոտության տնտեսական, սոցիալական և էկոլոգիական ասպեկտների զուգակցումը, որը հնարավորություն կտա առավել ընդհանրական և համալիր պատկերացում կազմել գյուղական տարածքների ու բնակավայրերի վիճակի, հիմնախնդիրների և լուծման ուղիների մասին:

Ստացվել է՝ 01.03.2021
Գրախոսվել է՝ 09.03.2021
Հաստատվել է՝ 18.03.2021

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ковалев С.А. *Сельское расселение*. М., Изд-во МГУ (1963), 371 с.
2. Поросенков Ю.В., Диденко О.В. Основы теории комплексного географического исследования сельской местности областного региона. *Вестник ВГУ, География и Геоэкология* **2** (2007), 54–58.
3. Саушкин Ю.Г. Географическое изучение сельских населенных пунктов Советского Союза. *Вопросы географии* **5** (1947), 53–67.

4. Кабо Р.М. Высокогорные степи Чуйской долины Алтая (Природа и население). *Вопросы географии* **14 (**1949), 67–109.
5. Устинова Л.А. Некоторые особенности географии населения Горного Алтая. *Вопросы географии* **14 (**1949), 75–107.
6. Ляликов Н.И. Типы сельского расселения СССР. *География в школе* **2** (1948).
7. Ковалев С.А. Изучение сельской местности в экономической и социальной географии. *Вопросы географии* **115 (**1980), 172–184.
8. Джаошвили В.Ш. *Население Грузии*. Тбилиси (1968), 398 с.
9. Максимов В.А. *Экономико-географическое изучение сельской местности.* УФА (1985), 96 с.
10. Алексеев С.А. *Многоликая деревня*. М., Мысль (1990), 266 с.
11. Зубаревич Н.В. Трансформация сельского расселения и сети услуг в сельской местности. *Известия РАН. География* **3** (2013), 26–38.
12. Нефедова Т.Г. Факторы и тенденции изменения сельского расселения в России. *Социально-экономическая география. Вестник ассоциации российских географов-обществоведов (АРГО)* **7** (2018), 4–21.
13. Պոտոսյան Ա.Հ. *Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը*: Եր., ԵՊՀ հրատ. (2017), 466 էջ:
14. Պոտոսյան Վ.Ա., Ավագյան Ա.Ռ. ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման աշխարհագրական հետազոտման հիմնահարցերը: *ԵՊՀ գիտական տեղեկագիր*: *Երկրաբանություն և աշխարհագրություն* **52** : 3 (2018), 206–214: https://doi.org/10.46991/PYSU:C/2018.52.3.206
15. Մանասյան Մ.Գ. *Հասարակական աշխարհագրական հետազոտությունների մեթոդները*: ԵՊՀ հրատ. (2008), 258 էջ:

А. А. ПОДОСЯН

ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ КОМПЛЕКСНОГО ГЕОГРАФИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ СЕЛЬСКОГО РАССЕЛЕНИЯ ГОРНЫХ СТРАН

Резюме

Своеобразие расселения сельских территорий горных стран обусловлено разнообразием природно-географических условий и особенностями социально-экономического развития. В статье дан анализ и обобщение теоретических вопросов комплексного географического исследования сельских территорий и расселения горных стран.

A. H. POTOSYAN

THEORETICAL FRAMEWORK OF COMPLEX GEOGRAPHICAL RESEARCH OF RURAL SETTLEMENT IN THE MOUNTAINOUS COUNTRIES

Summary

The originality of rural areas and settlement of mountainous countries is predetermined by the diversity of natural geographical conditions and features of socio-economic development. The analysis and generaliztion of theoretical framework of complex geographical research of rural areas and settlement of mountainous territories are provided in the article.